ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջաղացաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ռուսաց լեզու» (20 դասաժամ), «Մաթեմատիկա» (10 դասաժամ) Հասարակագիտություն(3 դասաժամ) առարկաների և դասվարի (20 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար :

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում՝ (Ձև 1),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի
- .Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- Անձնագրի պատճենը,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ:
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստատթուղթ(առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2025թ օգոստոսի 21-ից **մինչև ս/թ** սեպտեմբերի 3-ը **ներառյալ** , ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ սեպտեմբերի 4-**ին՝ ժամը 14: 30-ին ,** Գեղարքունիքի մարզի Ջաղացաձորի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, Ջաղացաձոր բնակավայր 2-րդ փողոց , 2-րդ նրբանցք շենք 4 **Հեռ.՝ 093-400-626**